

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/7

20 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Զինչինի գյուղապետարան» պետական կառավարչական հիմնարկի 27.11.2014 թ-ի դիմում-գանգատը հաշվետվությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետից շուտ ներկայացվելու համար կիրառված պատասխանատվության միջոցները վերանայելու վերաբերյալ:

Տավուշի մարզի Զինչին գյուղի գյուղապետարանի գանգատում բերված փաստարկները.

2013թ. կտրվածքով Իջևանի ՏՀՏ-ի կողմից Զինչինի գյուղապետարանին հաշվեգրվել է տուգանք 426.5 հազար դրամ, քանի որ 2013թ. ապրիլ, մայիս, հունիս և օգոստոս ամիսներին եկամտային հարկի մասին հաշվետվությունները էլեկտրոնային փոստով հաղորդվել են հաշվետու ամսվա վերջին աշխատանքային օրվա ավարտին, որոնք, սակայն, Իջևանի ՏՀՏ-ի կողմից համարվել են չներկայացրած: Այդ մասին ի դեպ տեղյակ է պահվել միայն 2014թ. մարտ ամսին (հեռախոսով):

Անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր հաղորդված հաշվետվություն ընդունվել է «վավեր է» վերտառությամբ, հետևաբար որևիցե մեկի մտքով չէր անցնի, որ 10 ամիս հետո դրանք կհամարվեն «չներկայացված, չհաղորդված»:

Եթե Իջևանի ՏՀՏ-ն ժամանակին զգուշացրած լիներ ապրիլ ամսվա համար ներկայացնելով տուգանք, այս նամակը չէր լինի:

Գանգատաբերը հասկանում է, որ բոլոր դեպքերում թույլ է տվել վրիպում, բայց ինչու այն դարձնել ճակատագրական: Չէ որ գյուղապետարանը, այնուամենայնիվ, վերոգրյալի արդյունքում պետ բյուջեին որևիցե վնաս չի պատճառել:

Ինտենետային կապի ծրագրավորումը թույլ է տվել տնտեսությանը ժամկետից շուտ կատարելու հաղորդագրություն եկամտային հարկի մասին: Ինչու չի կատարվել արգելափակում:

Ավելորդ չէ նշել, որ Զինչինի գյուղապետարանը ունի թույլ տնտեսություն և ծախսումների մոտ 60%-ը կատարվում է ֆինանսական համահարթեցման նպատակով պետբյուջեից հատկացված դոտացիայով:

Գանգատաբերը խնդրում ըմբռնումով մոտենալ թույլ տրված վրիպմանը:

Ստացվել է այնպես որ, հաշվետվությունները «ժամանակին» չներկայացնելու համար տնտեսությունը ենթարկվում է տուգանքի, այնինչ՝ այն հաղորդվել է էլեկտրոնային փոստով, պարզապես 1 օր շուտ:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է Զինչինի գյուղապետարանի կողմից ներկայացված հաշվետվությունները համարել ներկայացված ժամկետում, որքանով որ նրանք այնուամենայնիվ տրվել են մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը և հարկային մարմնում ռեալ արձանագրված է եղել յուրաքանչյուր ամսվա համար հաշվեգրված և հաղորդված եկամտային հարկի գումարները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

